ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում ***27.06.2013թ.*** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ

Ա.Արսենյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ

Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար

Հ.Օհանյան ՀՀ ՏԿՆ ներկայացուցիչ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ

ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում 2013 թվականի առաջին կիսամյակում սեփական եկամուտների հավաքագրման և նախորդ տարիներին գոյացած աշխատավարձների և սոցվճարների պարտքերի մարման գործընթացի մասին/ զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ /:

2. Մարզի համայնքներում իրականացված վարչական վերահսկողության արդյունքների և համայնքներում գնումների կազմակերպման գործընթացի մասին / զեկ. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ /:

3. Առաջին վերարտադրության աշնանացան ցորենի գումարների հետ վերադարձման, համայնքներին հատկացված պարարտանյութի և դիզվառելիքի գումարների հավաքագրման ընթացքի մասին/զեկ. գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ցու. ԱՋԱՏՅԱՆ/:

4. Համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողատարածքների վարձակալության տրամադրման գործընթացի մասին / զեկ. հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գ. ՕՀԱՆՅԱՆ /:

5. Այլ հարցեր և հայտարարություններ:

6. Կից զեկուցողների զեկուցագրերը:

Արագածոտնի մարզխորհրդի հերթական նիստը կայացավ հունիսի 27-ին: Քննարկվեցին մարզի համայնքներում 2013 թվականի առաջին կիսամյակում սեփական եկամուտների հավաքագրման, նախորդ տարիներին գոյացած աշխատավարձների և սոցվճարների պարտքերի մարման գործընթացի, վարչական վերահսկողության արդյունքների և գնումների կազմակերպման գործընթացի, առաջին վերարտադրության աշնանացան ցորենի գումարների հետ վերադարձման, համայնքներին հատկացված պարարտանյութի և դիզվառելիքի գումարների հավաքագրման ընթացքի, համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողատարածքների վարձակալության տրամադրման գործընթացի մասին հարցերը:

Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Նորայր Գալստյանը տեղեկացրեց սեփական եկամուտների 2013 թվականի հավաքագրման գործընթացի վերաբերյալ և նախորդ տարիներին գոյացած աշխատավարձերի ու սոցվճարների պարտքերի մարման մասին, որի համար կազմված է ժամանակացույց:

Պարտքերի մարման մասին խոսեց նաեւ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յուրա Ազատյանը: Նրա խոսքը, սակայն, վերաբերում էր առաջին վերարտադրության աշնանացան ցորենի գումարների հետ վերադարձմանը: Նշվեց, որ այն իրականացնելու հարցը համայնքապետերի կարևորագույն խնդիրներից մեկն է: Ուշադրության ենթակա է նաև ազոտական պարարտանյութի և դիզելային վառելիքի հատկացման գործընթացը:

Կարևորություն տալով այս հարցին, մարզպետ Սարգիս Սահակյանը համայնքապետերին հորդորեց, որպեսզի աշխատանքներն իրականացվեն ամենայն պատասխանատվությամբ և ժամանակին: Հատկապես խոտհնձի այս ժամանակահատվածում հողագործների համար խիստ անհրաժեշտ է դիզվառելիքի ձեռքբերումը:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. Ազատյանին

--- Հավաքագրել մարզին տրամադրված աշնանացան ցորենի սերմացուի, ազոտական պարարտանյութի և դիզելային վառելիքի գումարները:

--- Համակարգել Բյուրական և Ավան թևերով սնուցվող համայնքներին ոռոգման ջրով ապահովելու գործընթացը և հետևել որպեսզի Ամբերդ ՀԷԿ-ի գործունեությունը չխոչնդոտի ազգաբնակչության ջրամատակարարումը:

2. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. Գալստյանին

--- ---Ապահովել հողի հարկի,հողի վարձավճարի և գույքահարկի հավաքագրումը:

3.Մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-ՄՀՊՏ պետ Գ.Օհանյանին

--- Ճշտել հողերի գոտիավորման կարգերը և արոտավայրերի վարձակալության իրական պատկերը ըստ համայնքների՝գործընթացը վերցնելով մշտական հսկողության տակ:

--- Մեկ ամսվա ընթացքում համայնքներում ընդգրկված պետական սեփականության հողերի հաշվեկշռում և տեղեկատվական բազաներում կատարել փոփոխություններ:

4. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.Գալստյանին և զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Պ.Նազարյանին

--- Ներկայացնել մարզի համայնքների զարգացման ծրագրերը և դրանց համապատասխանելիությունը համայնքների բյուջեներին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ Արագածոտնի մարզպետ Ս.Սահակյան

--- Անդրադառնալով բերքահավաքին և գյուղատնտեսական արտադրանքի իրացմանը, մարզպետը նշեց, որ իր կողմից պայմանավորվածություն է ձեռք բերվել, ,,Սպայկա,, ընկերության հետ՝ մարզում արտադրված ծիրանի մթերումը կազմակերպելու համար: Գյուղացիական տնտեսությունների կողմից աճեցրած միրգն ու բանջարեղենը մթերելու պատրաստակամություն են հայտնել նաև տեղի ,,Թամարա ֆրութ,,-ը, և հարևան մարզերում գործող այլ ձեռնարկություններ:

2. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Հովսեփյան

--- Խստագույնս հետևել համայնքների ավագանիների որոշումների իրավական կողմի ապահովմանը:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ